Էնգելսը։ Ինչ վերաբերում է սոցիալ-դեմոկրատ գինվորականներին, ապա նրանք հանդես են եկել կապմակերպություններով և իրենց մարտական ելույթներով առանձին եռանդ ու թափ են հաղորդել Հայաստանի բանվորների ու ռևոլյուցիոն գյուղացիների պայքարին։

Սովետական Հայաստանի պատմությունը լուսաբանելուն զուգընթաց, ինստիտուտի Սովետական Հասարակության պատմության սեկտորի առաջ դրվում են լուրջ խնդիրներ, որոնց լուծման համար սեկտորն այժմյանից իսկ ձեռնարկել է մի շարք պրոբլեմների շուրջը մենագրություններ ստեղծելու և փաստական նյութերի ժողովածուներ հրատարակելու գործին։ Այսպես, պատրաստվել և առաջիկայում հրատարակության են հանձնվելու Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի, ինտելիգենցիայի, կուլտուրական ռևոլյուցիայի պատմության և այլ հարցերին նվիրված մենագրություններ։ Այս մենագրությունները և Սովետական Հայաստանի առանձին գործարանների պատմության մասին մինչև այժմ հրատարակված և առաջիկայում հրատարակվելիք աշխատությունները մեծապես կնպաստեն Սովետական հասարակության պատմության սեկտորի առաջ ծառացած գժվարությունները հաղթահարելու գործին։ Հիշենք, որ այս տեսակետից մեծ կլինի և ինստիտուտին կից Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի կարիքների պատրաստած և պատրաստելիք ժողովածուների բնձեռած օգնությունը։ Առաջիկա տարի տարում «Սոցիալիստական քաղաքներ» սերիայով լույս են տեսնելու Սովետական Հայաստանի քաղաքների պատմությանը նվիրված աշխատություններ։ Ինստիտուտի նոր պատմության սեկտորը, բազմահատորյակի աշխատանքին ձեռնարկելու հետ մեկտեղ, շարունակելու է Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը, բանվոր դասակարգի ձևավորմանն ու զարգացմանը, ազգային-ազատագրական շարժումներին վերաբերող հարցերը, լուսաբանելու և նոր մենագրություններ տալու աշխատանքը։ Նախատեսվում է 1960—1962 թթ. Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտների հետ միասին հրատարակել Անդրկովկասը Ռուսաստանի հետ միանալու պատմությանը նվիրված փաստաթղթերի ժողովածու 3 հատորով։ Առաջիկա տարիներին հրատարակվելու է նաև հայ հասարակական մտքի, առանձնապես հայ պատմագիտական մտքի զարգացման պատմությունը լուսաբանելու աշխատանքը։

Ինստիտուտի առաջնահերթ խնդիրներից է նաև հայ գյուղացիության պատմությունը լուսաբանելու հարցը։ Այս ուղղությամբ կատարվել են աչքի ընկնող աշխատանքներ, բայց հայ գյուղացիության պատմությունը, զուգորդված ազգարային հարաբերությունների հետ, դեռ շատ մութ կողմեր ունի, որոնց լուսաբանումը վազուց դարձել է անհրաժեշտություն։ Ինստիտուտի հին և միջին դարերի պատմության սեկտորը, ինչպես և մյուս սեկտորները, առաջիկա մի քանի տարիների ընթացքում կտան նոր մենագրություններ՝ հայ գյուղացիության պատմության այն շրջանների վերաբերյալ, որոնք տակավին չեն ուսումնասիրված կամ թերի են ուսումնասիրված։ Սեկտորի աչքի ընկնող գործը, որ արժեքավոր ավանդ կլինի հայագիտության գանձարանում, դա նրա կազմած «Հայ Կանոնագիրք» ժողովածուն է։ Այդ ժողովածուն, որ լույս կտեսնի առաջիկայում, լինելու է իր տեսակի մեջ առաջին և գրալի օգնություն կլինի հայ իրավագիտության պատմությունը հետազոտողներին։

ՍՍՌՄ և ժողովրդական դեմոկրատիայի երկրների պատմության սեկտորը, որ անհամեմատ նոր է և համալրվում է երիտասարդ կադրերով, մի շարք մենագրությունների հետ միաժամանակ հրատարակելու է արժեքավոր փաստաթղթերի ժողովածուներ, որոնց կազմելու մեջ կներգրավվեն ոչ միայն ՍՍՌՄ-ի, այլև Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Բուլգարիայի, Հունգարիայի, Այրանիայի, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի գիտա-հետազոտական հիմնարկները։

Ա. Գ.

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1959 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայաստանը հին մշակույթի երկիր է և վերին աստիճանի հարուստ հնագիտական հուշարձաններով։ Հայաստանում կատարվող պեղումները բնականաբար նպատակ ունեն երևան բերելու և ուսումնասիրելու մեր նախնիների տարբեր դարաշրջաններում ստեղծած նյութական մշակույթը։

Նախորդ տարիների նման 1959 թ. նույնպես պեղումները կատարվել են մի շարք հնավայրերում և նրանց արդյունքներին համառոտակի կանդրադառնանք հուշարձանների ժամանակագրական հաջորդականությամբ։

ՇԵՆԳԱՎԻԹԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(Կատարել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը, պատմ. գիտ. թեկնածու Ս. Սարգսյանի ղեկավարությամբ)։

Շենգավիթը գտնվում է Երևան քաղաքի հարավ-արևմտյան ծայրին, Հրազդանի ձախ ափին։ Դեռևս 1936—1938 թթ. հնագետ Ե. Բայբուրդյանը պեղումներ կատարելով այստեղ հայտնաբերել էր քարե դարից մետաղի օգտագործմանը անցման ժամանակաշրջանի կամ էնեոլիթյան բնակավայր, բոլորակ ու քառակուսի բնակարաններով, որոնց մեջ գտնվել էին հացահատիկների մնացորդներ, կավե բնորոշ անոթների բեկորներ, քարե գործիքներ և շատ այլ իրեր։

1958 թ. Շենգավիթի պեղումները վերսկսվեցին պատմական գիտությունների թեկնածու Ս. Սարգսյանի գլխավորությամբ և տևելու են մի քանի տարի։

1959 թ. պեղումների շնորհիվ բացվել են հնագույն այս բնակավայրի (3-րդ հազարամյակ մինչև 2-րդ հազարամյակի սկիզբը մ.թ.ա.) շրջապարսպի հարավային հատվածի մնացորդները՝ 30 մ երկարությամբ և 4 մ լայնությամբ։ Բնակավայրում բացվել են հում աղյուսով շարված երեք բոլորակ շենքերի և նրանց շուրջը դասավորված անտաշ քարերով շարված քառանկյունաձև քսան բնակարանների մնացորդները։

Բոլորակ սենյակներում գտնվել են թրծած կավից պատրաստված շրջանակաձև օջախներ, քարե կացիններ, աղորիքներ, սանդեր, կայծքարից պատրաստված մանգաղի կարիչ ներդիրներ, ոսկորե գործիքներ, գարու և ցորենի հատիկներ, մանր և խոշոր եղջերավոր անասունների ոսկորներ։ Իրենց քանակով և բազմազանությամբ աչքի են ընկնում էնեոլիթի համար բնորոշ սև փայլով և երկրաչափական զարդերով կավե անոթների բեկորները։

1958—1959 թթ. պեղումներով պարզված է, որ Շենգավիթի էնեոլիթյան բնակավայրը ունի չորս հաջորդական շերտեր, վերին՝ չորրորդ շերտում հայտնաբերվել և պեղվել են դամբարաններ, որոնց մեջ գտնվել են կավե անոթներ։ Հարուստ նյութեր պարունակող և բազմաշերտ այս բնակավայրի պեղումները մեծ նշանակություն ունեն էնեոլիթյան դարաշրջանի և նրա զարգացման էտապների ուսումնասիրության համար։

ԼՃԱՇԵՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(Կատարել է ՊՊԹ հնագիտական արշավախումբը, պատմ. գիտ. թեկնածու Հ. Ենգիբարյանի ղեկավարությամբ)։

Նախորդ տարիների ընթացքում Լճաշենում պեղվել էին բրոնզեդարյան դամբարաններ և խոշոր դամբանաբլուրներ, որոնց մեջ բացվել էին սայլեր, ռազմակառքեր, բրոնզե բարձրարվեստ առարկաներ, կավե, փայտե անոթներ, զանազան զարդեր։ 1959 թ. պեղումների ժամանակ խոշոր դամբանաբլուրներում բացվել են ավելի վաղ ժամանակների՝ երկրորդ հազարամյակի առաջին կեսի կավե սև փայլեցրած զարդարուն անոթներ, առանձին դեպքերում գունազարդ (կարմիր ֆոնի վրա սև գույնի երկրաչափական զարդերով) խեցեղենի հետ միասին։ Դրանք վաղ բրոնզեդարյան ուշագրավ և ինքնատիպ անոթներ են և կարևոր են այդ ժամանակաշրջանի ուսումնասիրության համար։

ԱՐԻՆ-ԲԵՐԴԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(Կատարել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Մոսկվայի Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանի հնագիտական արշավախումբը, ճարտարապետության թեկնածու Կ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ)։

Արին-բերդի տեղում Երևանի հարավարևելյան ծայրին գտնվել է ուրարտական Էրեբունի ամրոց-քաղաքը, որից ծագում է մեր մայրաքաղաքի անունը։ 1959 թ. արշավախումբը շարունակելով իր աշխատանքները բացել է մի շարք շինությունների մնացորդներ՝ ամրոցի կամ միջնաբերդի կենտրոնական մասում և հարավային եզերքին։ Արին-բերդում ևս, ինչպես

Կարմիր-բլուրում, բացվեց գինու մառան, որտեղ տեղադրված կարասներից մի քանիսի վրա սեպագրերով և հիերոգլիֆներով փորագրված է նրանց տարողությունը։ Բացված շենքերում գտնվել են ուրարտական խեցեղենի բեկորներ և այլ իրեր։

Աշխատանքների առավել աչքի ընկնող արդյունքը եղավ բազմագույն ներկերով կատարված բարձրարվեստ որմնանկարների հայտնաբերումը՝ միջնաբերդի կենտրոնի մի սրահում։

Թեև որմնանկարները գտնվում են կործանված պատերի վրա, այնուամենայնիվ մի շարք պատկերներ համեմատաբար լավ են պահպանվել. դրանք ուրարտական արվեստի համար բնորոշ պաշտամունքային տեսարաններ են, կենդանիների, դաղանների պատկերներ և երկրաչափական զարդեր։

Միջնաբերդի պարսպի արևելյան հատվածը բացելու ժամանակ գտնվել է քարի վրա փորագրված մի սեպագիր արձանագրություն, որը կրկնակն է Արգիշտի I-ի թողած արձանագրության, որը գտնվել էր այստեղ 1893 թ.։ Գտնվել են նաև ուրարտական երկու կնիքներ։

Ուրարտական Էրեբունի քաղաքի պեղումները Երևան են բերում այս կենտրոնի վարչատնտեսական և մշակութային նշանակությունը Ուրարտական պետության հյուսիսում։

ԿԱՐՄԻՐ-ԲԼՈՒՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(Կատարել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Լենինգրադի Պետական Էրմիտաժի միացյալ արշավախումբը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ)։

Կարմիր-բլուրը գտնվում է Երևան մայրաքաղաքի հարավ-արևմտյան ծայրին։ Հրազդանի ափին խոյացող բլրի վրա կառուցված է եղել ուրարտական Թեյշեբաինի քաղաքի միջնաբերդը, որի առջև փռված է եղել քաղաքը։ Երկար տարիների ընթացքում այստեղ կատարվող պեղումների խոշոր արդյունքները լայնորեն հայտնի են։ 1959 թ. պեղումները շարունակվեցին միջնաբերդում և քաղաքային մի թաղամասում։

Միջնաբերդի հարավ-արևելյան մասում բացվեցին երկու ստվար մուտքեր ունեցող մի սրահի, մի երկարուկ սրահի և մի քառանկյունի սրահի ավերակները։ Դրանց մեջ հայտնաբերվեցին քարե աղորիքներ, ուրարտական խեցեղեն, կայաններ, հին դիսագնդաձև հաղորդակից անոթներից կազմված և բարձր հենակ ունեցող մի աման և լայն ճոքավոր կոշիկի տեսք ունեցող երկու անոթ՝ մեկը փորագիր, մյուսը գունանկար զարդերով։ Դրանք ուրարտական արվեստի յուրօրինակ նմուշներ են։ Մի սրահի ավերակներն էլ բացվել են միջնաբերդի հյուսիս-արևմտյան մասում։ Բացված բոլոր սրահներն էլ նախկին տարիներում պեղված մի բանի [illegible] սենյակների հետ միասին կազմում են մի հսկայական պալատական շենքի բաժանմունքները։

Պեղվեց նաև քաղաքի թաղամասերից մեկը, որտեղ բացվեցին ուրարտական բնակելի երկու մեծ սենյակներ, որոնցից մեկի տակ հայտնաբերվեց նախաուրարտական շերտ, որտեղ գտնվեցին հացահատիկների մնացորդներ, բարե կուռերի բեկորներ, խեցեղեն և մետաղի մնացորդներ պարունակող հալոցներ՝ կավից։

Կարմիր-բլուրի պեղումները խոշոր նշանակություն ունեն ուրարտական տնտեսության և մշակույթի, ինչպես և ուրարտական, տեղական և ուրիշ ցեղերի մշակութային և այլ կապերի ուսումնասիրության համար։

ԳԱՌՆԻ ԱՄՐՈՑԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(Կատարել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը, պրոֆ. Բ. Առաքելյանի ղեկավարությամբ)։

Գառնիի պեղումների արդյունքները նույնպես լայնորեն հայտնի են։ 1959 թ. շարունակվեց ամրոցի պարսպի մաքրումը դրսից և ներսից։ Հյուսիսային 2-րդ և 3-րդ աշտարակների միջև ներսից հայտնաբերվեցին առաջին դարերի և ավելի հին՝ վաղ բրոնզեդարյան խեցեղենի բեկորներ։

Ավարտվեցին ամրոցի ներսում բացված

դղյակային-պալատական շենքի ավերակների բացման աշխատանքները։ Արքայական բնակելի այդ շենքի նկուղային հարկի մնացորդներն են պահպանվել։ Կենտրոնական առանցքով անցնող պատով շենքը բաժանված է երկու մասի և յուրաքանչյուր թևում եղել է 5-ական բաժանմունք։ Նկուղային հարկում գտնվված են եղել տնտեսական նշանակություն ունեցող բաժանմունքներ՝ հնձան, մառաններ, պահեստներ։ Սենյակներից մեկում հատակի տակ կառուցվել է ջրամբար-հոր՝ կրաշաղախ պատերով։

III դարի պատկանող այս նշանավոր քաղաքացիական շենքի կողքին գտնվում է խճանկար հատակով արքայական բաղնիքը, որը բացվել է 1953—1954 թթ. պեղումների ժամանակ։ 1959 թ. ավարտվեցին նաև բաղնիքի շրջապատի պեղումները։ Պարզվեց, որ բաղնիքի հնոցի առջև եղել է անտաշ քարից և առանց շաղախի կառուցված մի փոքրիկ ցախատուն, որն ունեցել է Π տառի ձևը։ Բաղնիքի կառուցումից քիչ հետո նրան կցվել է ևս մի սենյակ, որը ծառայել է իրրև հանդերձարան և պատի երկայնքով ունի նստարան։ Այս սենյակից դուռ է բացված դեպի նախկին հանդերձարանը՝ խճանկար հատակով սենյակը։

Ամրոցի կենտրոնական մասում ավարտվեց միջնադարյան (XIV—XV դդ.) մի հնձանի մնացորդների բացումը։ Հնձանը բաղկացած է երկու բաժանմունքից՝ բուն հնձանից և մառանից։ Առաջին բաժանմունքի մեջ փորված է մեկ գինու հոր, երկրորդի՝ մառանի մեջ՝ 3 հոր և հատակի տակ թաղված է մի կարաս։

Պեղումների ժամանակ գտնվել են մարմարե արձանների փոքր բեկորներ, երկաթե իրեր, խեցեղենի բեկորներ և այլ իրեր։

ԴՎԻՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(Կատարել է Պետական պատմական թանգարանի արշավախումբը, ՊՊԹ դիրեկտոր, պրոֆ. Կ. Կոֆադարյանի ղեկավարությամբ)։

1959 թ. պեղումները կենտրոնացված են եղել քաղաքի միջնաբերդում և հարավային թաղամասերից մեկում։

Միջնաբերդի հյուսիսային, արևմտյան և հարավային ծայրամասերում բացվել են միջնադարյան (IX—XIII դդ.) շենքերի մնացորդներ, որոնք նախորդ տարիներին բացված մեծ շինության բնակելի և տնտեսական բաժանմունքներն են կազմում, աղյուսապատ կամ կավակերտ պատերով և թրծած աղյուսից սալահատակով այս բաժանմունքներում բացվել են հոր-թարստոցներ, կարասներ և թոնիրներ, որոնց մեջ գտնվել են բազմաթիվ իրեր։

Շարունակվեցին պեղումները նաև միջնաբերդի երկրորդ, ավելի խորը ընկնող շերտում, որտեղ բացվեցին մարզպանական ժամանակներից մինչև 899 թ. երկրաշարժը գոյություն ունեցած աղյուսակերտ պալատական մեծ շենքի առանձին բաժանմունքների մնացորդները։ Պեղումների ժամանակ հայտնաբերվել են հասարակ և ջնարակած խեցեղենի հնագույն օրինակներ, որոնք իրենց ձևերով, մշակումով ու զարդերով կարևոր տեղ են գրավում խեցեղենի պատմության մեջ։

Միջնաբերդի բլրի արևմտյան լանջին, ուր նախորդ տարի բացվել էր ավելի հին (ուրարտական?) ժամանակների շերտ, որի մեջ գտնված կարասների վրա կան կենդանիների և ձձերի ռելյեֆ պատկերներ, որսի տեսարաններ, 1959 թ. բացվել են խեցեղենի թրծման մի հնոցի մնացորդներ՝ միջին փոքրիկ կավանոթներ, 70×50 սմ մեծությամբ մի տախտակ՝ մարդկանց և թռչունների ոճավորված, ռելյեֆ գլուխներով (հավանաբար պաշտամունքային նշանակությամբ)։ Քաղաքային թաղամասում բացված մեծ շինության մնացորդներից երևում է, որ սկզբնապես այն կառուցվել է V—VI դդ. սրբատաշ տուֆ քարով, ունեցել է խոյակներով սյուներ։ Հետագայում այդ շենքը վերականգնվել է, վերածվելով հասարակական նշանակություն ունեցող մեծ շենքի՝ հավանաբար կարավանատան։ Շենքի պեղումները ավարտված չեն, հետագա պեղումներով կարելի կլինի պարզել նրա հատակագիծը և ինչ լինելը։

Պեղումների ժամանակ Դվինում հայտնաբերվել են զգալի թվով կավե և այլ անոթներ, դրանց բեկորները և 100-ի չափ դրամներ։

ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ

(Կատարում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը, պատմական գիտությունների թեկնածու Ս. Բարխուդարյանի ղեկավարությամբ)։

Արշավախումբը շարունակեց հայերեն վիմագիր արձանագրությունների հավաքումը Սևանա լճի արևելյան ավազանում, որտեղ կատարեց և հետախուզական պեղումներ՝ պարզելու Բասարգեչարի շրջանի Ակունք գյուղի մոտ գտնվող հնագույության մի հուշարձանի բնույթը։ Երևան են եկել բլրի վրա կառուցված մի մեծ շենքի պատեր, երկաթե իրերի և խարամի մնացորդներ, խեցեղենի բեկորներ։ Ենթադրվում է, թե այստեղ եղել է վաղ հայկական ժամանակաշրջանի գյուղ։

Վիմագրական արշավախումբը այնուհետև իր աշխատանքները շարունակեց Հրազդանի շրջանում, որտեղ հավաքվեցին Կեչառույք վանքի և բազմաթիվ այլ վայրերի մեծ թվով արձանագրություններ։

Հավաքված արձանագրությունները հրատարակվելու են առանձին գրքով, որը կազմելու է Հայ վիմագրության դիվանի հերթական պրակներից մեկը։

ԷՋՄԻԱԾՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(Կատարել է Արվեստի ինստիտուտի արշավախումբը, ճարտարապետության բեկնածու Ա. Սահինյանի ղեկավարությամբ)։

Էջմիածնի մայր տաճարի վերանորոգման կապակցությամբ տաճարի ներսում պեղումներ կատարվել էին 1955—1956 թթ., որոնց շնորհիվ պարզվել էր, որ տաճարը, սկզբում բազիլիկ տիպի, կառուցվել է դեռևս IV դարում, իսկ V դարում (և ոչ թե VII դարում) վերափոխվել է կենտրոնագմբեթ շինության, որը թե՛ ներսից, և թե՛ դրսից եղել է խաչաձև։ Տաճարը ներսից զարդարված է եղել օրմնանկարներով և խճանկարներով։

1959 թ. մայր տաճարի արևելյան խորանում՝ բեմի տակ բացվեց IV դարի կամ նախաքրիստոնեական շրջանի շենքի խորանը, որի մեջ պահպանվում էր հեթանոսական թոնրաձև կրակարան։ Այս կրակարանի մեջ և նրա շուրջ գտնվեցին նույն հնագույն ժամանակի օրմնանկարների բազմաթիվ բեկորներ։ Բեմի շարվածքի ստորին մասում բացվեց ուրարտական ժամանակների համար բնորոշ մի քարակոթող (երկարությունը՝ 3,10 մ, լայնքը՝ 0,73, հաստությունը՝ 0,53 մ), բայց առանց արձանագրության։

Էջմիածնի տաճարի ներսում կատարված պեղումները խոշոր նշանակություն ունեն հայկական վաղ ֆեոդալական ճարտարապետության և կառուցողական արվեստի կազմավորման մի շարք հարցերի ճշմարտացի լուսաբանության տեսակետից։

ՋՐՎԵԺԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(Կատարել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը, ճարտարապետության բեկնածու Ն. Ս. Տոկարսկու ղեկավարությամբ)։

1957 թ. Ջրվեժում կատարված պեղումների շնորհիվ բացվել էին VII դարի մի կենտրոնագմբեթ եկեղեցու և XIII դարի մատուռի մնացորդները։ 1958—1959 թթ. հայտնաբերվեցին V—VI դարերի ճարտարապետական հուշարձանների մնացորդներ՝ մի եկեղեցու հիմքերը, դետնատիպ մի դամբարան, շինությունների և հնատիպ խաչի քանդակազարդ բեկորներ։

1960 թվականից սկսած, Հայաստանում կատարվելիք հիմնական հնագիտական-դաշտային աշխատանքները կենտրոնացվում են Հայկական ՍՍՌ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, որը կոչված է ապահովելու նրանց ավելի արդյունավետ ընթացքը և նյութերի գիտական մշակումն ու հրատարակությունը։

Բ. Ա.